



Եվրոպայի խորհրդի պայմանագրեր - Թիվ 120

**Մարզական միջոցառումների և հատկապես
ֆուտբոլային խաղերի ժամանակ
հանդիսատեսների բռնի գործողությունների և
կարգազանցության մասին եվրոպական
կոնվենցիա**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստրասբուրգ, 19.VIII.1985թ.

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն ու Եվրոպական մշակութային կոնվենցիային մաս կազմող այլ պետությունները, որոնք ստորագրել են սույն Կոնվենցիան,

Համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է առավել մեծ միասնության հասնել իր անդամների միջև,

Մտահոգված լինելով մարզական միջոցառումների, հատկապես ֆուտբոլային խաղերի ընթացքում հանդիսատեսների շրջանում բռնությամբ և կարգազանցությամբ և դրանց հետևանքներով,

Գիտակցելով, որ այս խնդիրը կարող է վտանգել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Թիվ (76) 41 բանաձևում ամրագրված սկզբունքները, որոնք հայտնի են որպես «Եվրոպական սպորտ բոլորի համար խարտիա»,

Շեշտադրելով միջազգային փոխըմբռնման բնագավառում սպորտի ունեցած կարևոր ներդրումը, և, հատկապես, իրենց հաճախականության պատճառով, Եվրոպական պետությունների ազգային և ակումբային հավաքականների միջև ֆուտբոլային հանդիպումները,

Համարելով, որ և՛ իշխանությունները և՛ անկախ մարզական կազմակերպությունները հանդիսատեսների բռնության և կարգազանցության դեմ պայքարելու համար ունեն առանձին, սակայն փոխլրացնող պարտավորություններ: Գիտակցելով, որ մարզական կազմակերպությունները նույնպես պատասխանատվություն են կրում անվտանգության հարցերում, և որ ընդհանուր առմամբ նրանք պետք է ապահովեն իրենց կողմից կազմակերպվող միջոցառումների կարգապահ ընթացքը,

Ավելին, համարելով, որ պետական իշխանություններն ու կազմակերպությունները պետք է այս նպատակով միասին աշխատեն բոլոր հարթություններում,

Համարելով, որ բռնությունը հասարակական երևույթ է, որն ունի լայն արձագանք, որի սկզբնապատճառները սպորտից դուրս են գտնվում, և որ սպորտը հաճախ բռնության բռնկման համար հարթակ է հանդիսանում,

Վճռական լինելով իրականացնել համատեղ և համակարգված գործողություններ մարզական միջոցառումներին հանդիսատեսների բռնի գործողությունները և կարգազանցությունը կանխարգելելու և վերահսկելու համար,

Համաձայնության եկան հետևյալ դրույթների վերաբերյալ.

Հոդված 1 – Կոնվենցիայի նպատակը

- 1 Պայմանագրի կողմերը, նպատակ ունենալով կանխարգելել և վերահսկել ֆուտբոլային հանդիպումների ընթացքում հանդիսատեսների բռնի գործողություններն ու կարգազանցությունը, պարտավորվում են, իրենց համապատասխան սահմանադրական դրույթների շրջանակում, անհրաժեշտ քայլեր ձեռնարկել սույն Կոնվենցիայի դրույթները կյանքի կոչելու համար:
- 2 Կողմերը կկիրառեն սույն Կոնվենցիայի դրույթները այն մարզաձևերի և մարզական միջոցառումների նկատմամբ, որտեղ հանդիսատեսների բռնի գործողությունները կամ կարգազանցությունը կարող է վտանգ ներկայացնել՝ համաձայն նմանատիպ մարզաձևերի

և մարզական միջոցառումների կոնկրետ պահանջների:

Հոդված 2 – Ներպետական համակարգում

Կողմերը կհամակարգեն իրենց կառավարությունների գերատեսչությունների և այլ պետական մարմինների քաղաքականությունն ու գործողությունները՝ ուղղված հանդիսատեսների բռնի գործողությունների և կարգազանցության դեմ՝ անհրաժեշտության դեպքում հիմնելով համակարգող մարմիններ:

Հոդված 3 – Միջոցները

- 1 Կողմերը պարտավորվում են ապահովել հանդիսատեսների բռնի գործողությունների և կարգազանցության կանխարգելմանն ու վերահսկողությանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրագործումը ներառյալ մասնավորապես՝
 - ա ապահովել բավարար հասարակական կարգ ու կանոնի պահպանման համար անհրժեշտ ռեսուրսները բռնության բռնկումներին ու կարգազանցությանը դիմագրավելու նպատակով՝ մարզադաշտերի անմիջական հարևանությամբ և դրանց ներսում և հանդիսատեսների կողմից օգտագործվող փոխադրման ուղիների երկայնքով,
 - բ օժանդակել միջոցառումներին առնչվող կամ առնչվելու հավանականություն ուեցող տարբեր վայրերում գտնվող ոստիկանական ուժերի միջև սերտ համագործակցությանը և համապատասխան տեղեկատվության փոխանակմանը,
 - գ կիրառել կամ, եթե անհրաժեշտ է, ընդունել այնպիսի օրենսդրություն, որը հանդիսատեսների բռնի գործողությունների կամ կարգազանցության հանցանքների կատարման համար մեղավոր ճանաչված ամձամց համար նախատեսում է համապատասխան պատժամիջոցներ, կամ, ըստ կոնկրետ դեպքերի՝ համապատասխան վարչական միջոցներ:
- 2 Կողմերը պարտավորվում են խրախուսել մարզասերների ակումբների պատասխանատու կազմակերպումն ու ընթացքը և նրանց ղեկավարության կազմից պատասխանատուների նշանակումը, որպեսզի հանդիպումների ժամանակ օգնեն կառավարել և իրազեկել հանդիսատեսներին և ուղեկցել մարզասերների խմբերը դեպի այլ վայրերում ընթացող հանդիպումներ:
- 3 Կողմերը, ակումբների, կազմակերպված մարզասերների, ճանապարհորդական գործակալությունների հետ համագործակցությամբ, կխրախուսեն, որքանով որ դա հնարավոր է օրենսդրորեն, մեկնան վայրերից ճանապարհորդական նախապատրաստությունների համակարգմանը, որպեսզի չթուլատրեն հավանական կարգազանցներին ներկա գտնվել հանդիպումներին:
- 4 Կողմերը կաշխատեն ապահովել, անհրաժեշտության դեպքում ընդունելով համապատասխան օրենսդրություն, որը չենթարկվելու համար կսահմանի պատժի տեսակներ, կամ ցանկացած այլ համապատասխան միջոցներով, որպեսզի այն դեպքերում, երբ կա հանդիսատեսների բռնի գործողությունների և կարգազանցության վտանգ, մարզական կազմակերպություններն ու ակումբները, անհրաժեշտության դեպքում, մարզադաշտերի սեփականատերերի և իշխանությունների հետ համատեղ, համաձայն ներպետական օրենսդրությունում սահմանված պարտավորությունների, ձեռնարկեն պրակտիկ միջոցներ մարզադաշտերի շրջակայքում և ներսում բռնությունն ու կարգազանցությունը կանխարգելելու և վերահսկելու նպատակով: Այդ թվում՝

- ա) ապահովել, որ մարզադաշտերի նախագիծն ու ֆիզիկական կառուցվածքը անվտանգ լինեն հանդիսատեսների համար, որ դրանք չնպաստեն հանդիսատեսների միջև բռնությանը, թույլ տան ամբոխի արդյունավետ վերահսկում, ունենան համապատասխան արգելքներ և ցանկապատեր, և անվտանգության ու ոստիկանական ուժերին գործելու հնարավորություն տան,
- բ) արդյունավետ կերպով առանձնացնել հակառակ թիմերի երկրպագուներին՝ հյուրընկալվող երկրպագուների խմբերին ընդունելուց հետո նրանց հատուկ տարածքներ տրամադրելով,
- գ) ապահովել նման առանձնացումը խստորեն վերահսկելով տոմսերի վաճառքը և հատուկ միջոցներ ձեռնարկել հանդիպմանն անմիջապես նախորդող շրջանում,
- դ) օրենքի շրջանակներում հանդիպումներից բացառել կամ արգելել մուտքը դեպի մարզադաշտեր արդեն ճանաչված կամ հավանական կարգազանցներին և ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ գտնվող մարդկանց,
- ե) մարզադաշտերն ապահովել հանրությանը դիմելու արդյունավետ համակարգերով և հետևել, որ դրանք, հանդիպման ծրագիրը և հանրությանը իրազեկելու այլ միջոցները, լիովին օգտագործվում են հանդիսատեսների կարգապահությունը խրախուսելու համար,
- զ) արգելել հանդիսատեսների կողմից ոգելից խմիչքների ներմուծումը մարզադաշտեր, սահմանափակել, և նախապատվելիորեն արգելել, մարզադաշտերում ոգելից խմիչքների վաճառքն ու ցանկացած տարածումը, և ապահովել, որ առկա բոլոր խմիչքները լինեն անվտանգ տարրաներում,
- է) վերահսկողություն ապահովել, որպեսզի հանդիսատեսները մարզադաշտ չբերեն այնպիսի առարկաներ, որոնք հնարավոր է օգտագործվեն բռնի գործողություններում, կամ հրավառության և նմանատիպ այլ պարագաներ,
- ը) ապահովել, որ կապի սպաները հանդիպումներից առաջ համագործակցեն ինչխանությունների հետ ամբոխի կառավարման համար անհրաժեշտ միջոցառումների շուրջ, որպեսզի համապատասխան կանոնները գործեն համակարգված կերպով:
- 5) Կողմերը պետք է ձեռնարկեն համապատասխան սոցիալական և կրթական միջոցներ, մտապահելով զանգվածային լրատվամիջոցների պոտենցիալ կարևորությունը սպորտում և դրա հետ ասոցացվող բռնությունը կանխարգելելու գործում, մասնավորապես խթանելով մարզական միջոցառումների լավագույն կերպարը կրթական և այլ արշավների միջոցով, աջակցելով ազնիվ խաղի գաղափարին, հատկապես երիտասարդների շրջանում, որպեսզի բարձրացվի հանդիսատեսների և մարզիկների շրջանակում փոխադարձ հարգանքն ու նաև խրախուսել սպորտում աճող ակտիվ մասնակցությունը:

Հոդված 4 – Միջազգային համագործակցություն

- 1) Կողմերը սերտորեն կհամագործակցեն սույն Կոնվենցիայով սահմանված հարցերի շուրջ և, որտեղ ահնրաժեշտ է, նման համագործակցություն կխրախուսեն ազգային մարզական գերատեսչությունների միջև:
- 2) Միջազգային ակումբային և ներկայացուցչական հանդիպումներից կամ մրցումներից առաջ

համապատասխան Կողմերը կիրավիրեն իրենց համապատասխան պետական մարմիններին, հատկապես մարզական կազմակերպություններին, կանխորոշելու այն հանդիպումները, որտեղ հանդիսատեսների բռնության կամ կարգազանցության վտանգ կա: Նման հանդիպումների տեղորոշման դեպքում հյուրընկալող երկրի համապատասխան իշխանությունները պետք է շահագրգիռ կողմերի միջև խորհրդակցություն կազմակերպեն: Նման խորհրդակցությունները պետք է տեղի ունենան հնարավորինս շուտ և չպետք է լինեն ավելի ուշ, քան հանդիպումից երկու շաբաթ առաջ, և պետք է ներառեն մինչև հանդիպումը, դրա ընթացքում և դրանից հետո կազմակերպական միջոցներ, քայլեր և նախազգուշական միջոցներ, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, բացի սույն Կոնվենցիայում սահմանված միջոցառումներից՝ լրացուցիչ միջոցներ

Հոդված 5 – Կարգազանցների հայնտաբերումն ու դատական քննությունը

- 1 Կողմերը, հարգելով գոյություն ունեցող իրավական ընթացակարգերն ու դատական համակարգի անկախության սկզբունքը, պետք է հետամուտ լինեն, որ բռնություններ կամ այլ քրեական հանցանք գործած հանդիսատեսները բացահայտվեն և հետապնդվեն՝ համաձայն գործող օրենսդրության:
- 2 Որտեղ անհրաժեշտ է, հատկապես հյուրընկալվող հանսիդատեսների պարագայում, և համապատասխան այդ ոլորտի միջազգային պայմանագրերի, Կողմերը պետք է քննարկեն հետևյալ միջոցառումները.
 - ա մարզական միջոցառումների ընթացքում բռնություն կամ այլ քրեական հանցանք գործելու կապակցությամբ ձեռքակալված անձանց փոխադրել նրանց բնակության երկիր,
 - բ հետամուտ լինել մարզական միջոցառումների ընթացքում բռնության կամ քրեորեն պատժելի վարքի մեջ կասկածվող անձանց իրենց պետությանը հանձնմանը:
 - գ մարզական միջոցառումներին բռնության կամ այլ քրեորեն պատժելի հանցանքներ գործած դատապարկված անձանց տեղափոխումն իրենց բնակության երկրներ՝ պատիժը այնտեղ կրելու նպատակով:

Հոդված 6 – Լրացուցիչ միջոցառումներ

- 1 Կողմերը պարտավորվում են սերտորեն համագործակցել իրենց համապատասխան ազգային մարզական կազմակերպությունների և ակումբների հետ, և որտեղ անհրաժեշտ է, մարզադաշտերի սեփականատերերի հետ, կապված մարզադաշտերի ֆիզիկական կառուցվածքի փոփոխման կամ այլ փոփոխությունների պլանավորման և իրականացման հետ, ներառյալ դեպի մարզադաշտեր մուտքն ու ելքը, որոնք անհրաժեշտ են անվտանգությունը բարելավելու և բռնությունը կանխարգելելու համար:
- 2 Կողմերը պարտավորվում են անհրաժեշտության դեպքում և համապատասխան պարագայում խթանել մարզադաշտերի ընտրության պահանջները սահմանող համակարգ, որոնը նկատի կունենա հանդիսատեսների անվտանգությունը և նրանց միջև բռնության կանխարգելումը, հատկապես այն մարզադաշտերում, որոնք օգտագործվում են այն խաղերի համար, որոնք մեծ և դժվար կառավարվող բազմություններ գրավելու հավանականություն ունեն:
- 3 Կողմերը պարտավորվում են խրախուսել, որ իրենց ազգային մարզական միավորումները, շարունակաբար վերանայեն իրենց կանոնակարգերը, որպեսզի վերահսկեն այն երևույթները, որոնք կարող են նպաստել խաղացողների կամ հանդիսատեսների կողմից բնույթան բնույթան:

Հոդված 7 – Տեղեկատվության տրամադրումը

Յուրաքանչյուր Կողմ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով, կտրամադրի ամբողջ համապատասխան տեղեկատվությունը Կոնվենցիայի դրույթների կատարման նպատակով իր կողմից ձեռնարկված օրենսդրական և այլ միջոցառումների վերաբերյալ՝ ֆուտբոլի և այլ մարզաձևերի պարագայում:

Հոդված 8 – Մշտական հանձնաժողովը

- 1 Կոնվենցիայի նպատակների համար սույնով հիմնվում է Մշտական հանձնաժողով:
- 2 Ցանկացած Կողմ կարող է Մշտական հանձնաժողովում ներկայացված լինել մեկ կամ ավելի պատվիրակներով: Յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:
- 3 Եվրոպայի խորհրդի անդամ ցանկացած պետություն կամ Եվրոպական մշակութային կոնվենցիայի անդամ այլ պետություն, որը սույն Կոնվենցիայի կողմ չի հանդիսանում, կարող է ներկայացված լինել հանձնաժողովում որպես դիտորդ:
- 4 Մշտական հանձնաժողովը կարող է միաձայն որոշմամբ հրավիրել Եվրոպայի խորհրդի ցանկացած ոչ անդամ պետություն, որը Կոնվենցիայի կողմ չէ, ինչպես նաև համապատասխան ցանկացած մարզական կազմակերպություն դիտորդի կարգավիճակով ներկա լինել իր մեկ կամ ավելի հանդիպումների ընթացքում:
- 5 Մշտական հանձնաժողովը գումարում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը: Առաջին հանդիպումը պետք է կայանա Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում: Այն այնուհետև պետք է կայանա առնվազն ամեն տարի: Ի լրումն, այն պետք է հրավիրվի ցանկացած ժամանակ, երբ Կողմերի մեծամասնությունը նման ցանկություն է հայտնում:
- 6 Կողմերի մեծամասնությամբ է ապահովվում Մշտական հանձնաժողովի հանդիպում կազմակերպելու համար անհրաժեշտ քվորումը:
- 7 Սույն Կոնվենցիայի դրույթների համապատասխան, Մշտական հանձնաժողովը պետք է մշակի և միաձայն ընդունի իր սեփական Կանոնակարգը:

Հոդված 9

- 1 Մշտական հանձնաժողովը պատասխանատու է սույն Կոնվենցիայի կիրառման մոնիտորինգի համար: Այն մասնավորապես կարող է.
 - ա քննարկել սույն Կոնվենցիայի դրույթները և ուսումնասիրել անհրաժեշտ ցանկացած փոփոխությունները,
 - բ համապատասխան մարզական կազմակերպությունների հետ ունենալ խորհրդակցություններ,
 - գ Կողմերին առաջարկություններ անել Կոնվենցիայի նպատակների իրագործմանը միտված միջոցառումների վերաբերյալ,
 - դ համապատասխան առաջարկություններ անել Կոնվենցիայի շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ հանրությանը իրազեկելու համար,
 - ե Նախարարների կոմիտեին առաջարկություններ ներկայացնել Կոնվենցիային

միանալու հրավիրվող Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների վերաբերյալ,

- զ անել ցանկացած առաջարկություն ուղղված Կոնվենցիայի արդյունավետության բարձրացմանը:
- 2 Իր գործառույթներն իրականացնելու համար Մշտական հանձնաժողովը կարող է իր նախաձեռնությամբ կազմակերպել փորձագետների խմբերի հանդիպումներ:

Հոդված 10

Յուրաքանչյուր հանդիպումից հետո Մշտական հանձնաժողովը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին ուղարկում է իր աշխատանքի և Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ զեկույց:

Հոդված 11 – Փոփոխությունները

- 1 Սույն Կոնվենցիայում փոփոխություններ անելու վերաբերյալ առաջարկություններ կարող են արվել Կոնվենցիայի անդամ կողմի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կամ Մշտական հանձնաժողովի կողմից,
- 2 Փոփոխության ցանկացած առաջարկություն Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի անդամ հանդիսացող այլ պետություններին և բոլոր անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք միացել են դրան կամ հրավիրվել են միանալ՝ համաձայն Հոդված 14-ի դրույթների:
- 3 Անդամ պետություններից մեկի կամ Նախարարների կոմիտեի կողմից առաջարկված ցանկացած փոփոխություն պետք է փոխանցվի Մշտական հանձնաժողովին այն հանդիպումից, որտեղ փոփոխությունը պետք է քննարկվի, առնվազն երկու ամիս առաջ: Մշտական հանձնաժողովը պետք է Նախարարների կոմիտեին ներկայացնի առաջարկված փոփոխության վերաբերյալ իր կարծիքը՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան մարզական կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո:
- 4 Նախարարների կոմիտեն պետք է քննարկի առաջարկված փոփոխությունն ու Մշտական հանձնաժողովի կողմից ներկայացված կարծիքը, և կարող է ընդունել փոփոխությունը:
- 5 Նախարարների կոմիտեի կողմից սույն հոդվածի 4-րդ պարբերության դրույթների համաձայն ընդունված ցանկացած փոփոխություն պետք է փոխանցվի Կողմերին նրանց կողմից դրա ընդունման համար:
- 6 Սույն հոդվածի 4-րդ պարբերության դրույթների համաձայն ընդունված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է մեկամսյա ժամանակաշրջանը, որի ընթացքում բոլոր Կողմերը պետք է Գլխավոր քարտուղարին տեղեկացնեն իրենց կողմից դրա ընդունման վերաբերյալ:

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 12

- 1 Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և Եվրոպական մշակութային կոնվենցիայի մաս կազմող այլ պետությունների ստորագրության համար, որոնք դրանով պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունը կարող են արտահայտել այն.

- ա ստորագրելով՝ առանց վավերացմանը, ընդունմանը կամ հաստատմանը վերաբերող վերապահման, կամ
 - բ ստորագրելով՝ վավերացմանը, ընդունմանը կամ հաստատմանը վերաբերող վերապահումով, հետագայում վավերացնելով, ընդունելով կամ հաստատելով:
- 2 Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են տրվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 13

- 1 Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է մեկ ամսյա ժամանակաշրջան սկսած այն օրից, երբ Եվրոպայի խորհրդի անդամ երեք պետություններ իրենց համաձայնությունն են հայտնել պարտավորված լինել Կոնվենցիայի դրույթներով՝ համաձայն Հոդված 12-ի:
- 2 Հետագայում Կոնվենցիայի դրույթներով պարտավորված լինելու համաձայնություն հայտնած յուրաքանչյուր պետության նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է ստորագրման կամ փաստաթղթի վավերացման, ընդունման կամ հաստատման օրից մեկամսյա շրջան:

Հոդված 14

- 1 Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն խորհրդակցելով Կողմերի հետ կարող է Կոնվենցիային միանալ հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետություն՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության Հոդվածի 20.դ-ի՝ ձայների մեծամասնությամբ և Նախարարների կոմիտեում ներկա լինելու իրավունք ունեցող պայմանագրի կողմ հանդիսացող Պետությունների ներկայացուցիչների միաձայն որոշմամբ:
- 2 Կոնվենցիային միացող ցանկացած պետության նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է միացման փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ տրվելու օրից մեկ ամիս:

Հոդված 15

- 1 Ցանկացած պետություն կարող է ստորագրման պահին կամ վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթի ի պահ տալու ժամանակ նշել այն տարածքը կամ տարածքները, որտեղ կկիրառվի սույն Կոնվենցիան:
- 2 Ցանկացած Կողմ կարող է, ցանկացած առավել ուշ շրջանում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ, տարածել սույն Կոնվենցիայի կիրառումը այդ հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի նկատմամբ: Այդպիսի տարածքի նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է այդ հայտարարության Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրից մեկամսյա շրջան:
- 3 Նախորդ երկու պարբերությունների կապակցությամբ արված ցանկացած հայտարարություն կարող է նման հայտարարությունում նշված ցանկացած տարածքի նկատմամբ հետ կանչվել Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ: Նման հետկանչումը ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցման ստացմանը հաջորդած վեց ամսյա շրջան:

Հոդված 16

- 1 Ցանկացած Կողմ կարող է ցանկացած ժամանակ հրաժարվել սույն Կոնվենցիայից՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ:
- 2 Նման հրաժարումը ուժի մեջ է մտնում այն ամսվա առաջին օրը, որին նախորդել է է Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցման ստացման օրին հաջորդած վեց ամսյա շրջան:

Հոդված 17

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցում է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ այլ պետություններին և սույն Կոնվենցիային միացած ցանկացած պետության.

- ա Հոդված 12-ի համաձայն յուրաքանչյուր ստորագրման մասին,
- բ Հոդված 12-ի կամ 14-ի համաձայն վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնելու մասին,
- գ Հոդված 13-ի կամ 14-ի համաձայն սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր օրվա մասին,
- դ Հոդված 7-ի համաձայն ուղարկված ցանկացած տեղեկատվության մասին,
- ե Հոդված 10-ի համաձայն կատարված ցանկացած զեկույցի մասին,
- զ Հոդված 11-ի համաձայն կատարված փոփոխության ցանկացած առաջարկի կամ ընդունված ցանկացած փոփոխության և այդ փոփոխության ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- է Հոդված 15-ի համաձայն կատարված ցանկացած հայտարարության մասին,
- ը Հոդված 16-ի համաձայն կատարված ցանկացած ծանուցման և հրաժարման ուժի մեջ մտնելու օրվա մասին,
- Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն Կոնվենցիան:

Ստորագրված է Ստրասբուրգում, 1985թ. օգոստոս 19-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում:: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը փոխանցում է վավերացված օրինակները Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի անդամ պետություններին և Կոնվենցիային միանալ հրավիրված ցանկացած պետությանը: